ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2023 թ. N 430-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1306-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին» N 1306-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) «2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ» բաժնի 2.1. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ) ենթաբաժնի աղյուսակի 13-րդ տողից հետո լրացնել նոր տողեր հետևյալ բովանդակությամբ.

071603.00.6	**Ավիացիոն և հրթիռային տեխնիկա**				
	071603.05.6 Անօդաչու թռչող սարքերի շահագործում և կիրառում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)*** կամ Մ(գ)***		Հլգ(գ) *

2) «2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)» բաժնի աղյուսակի 7-րդ տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ .

0716.05.5	Ավիացիոն սարքեր և համալիրներ (հիմնական կրթությամբ)

3) «Ծանոթություններ» բաժնի վերջին պարբերությունից հետո լրացնել ն պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«***Դիմորդները տվյալ առարկաների համար որպես մրցութային գնահատակ կարող են դիմում-հայտում հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի և համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետակ ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտակ քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից:

[illegible]մ»

[illegible]ՊԵՏՈՒԹՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ